

ՀՀ Վարչական դատարանին

Հայցվոր՝
“Ինֆորմացիայի ազատության կենտրոն”
հասարակական կազմակերպություն
Նախագահ՝ Լիանա Դոյրոյան
ՀՎՀՀ՝ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երևան 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010 56 03 60, e-mail: foi@foi.am

Ներկայացուցիչ՝
Գեորգ Ղուկասի Հայրապետյան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0054, Դավթաշեն 1-ին թ., 51շ., 56բն.
Հեռախոս՝ 099 11 30 99

Ծանուցման հասցե՝
ՀՀ, ք. Երևան 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Պատասխանողներ՝
Աշտարակի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ, Ն.Աշտարակեցու հր 7

Արմավիրի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք.Արմավիր, Հանրապետության փ. 32

Գավառի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք. Գավառ, Գրիգոր Լուսավորչի 12

Հրազդանի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Վարչական շենք

Կապանի քաղաքապետարան
Հասցե՝ ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա

Եղեգնաձորի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք. Եղեգնաձոր, Շահումյան փ. 1

Իջևանի քաղաքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք. Իջևան, Երևանյան փ. 6

Հայցադիմումը ներկայացվել է առձեռն

Հայց

Վարչական մարմնի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու եւ տեղեկատվություն հրապարակելուն պարտավորեցնելու պահանջների մասին

ՀՀ վարչական դատարանին ենք դիմում՝ իրացնելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ եւ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի (հետայսու՝ նաեւ Օրենք) 11-րդ հոդվածով ձեւակերպված դատական պաշտպանության մեր իրավունքը:

1. Հայցի էության հակիրճ նկարագրությունը

1.1. “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաեւ՝ ԻԱԿ, Վստահորդ) ոչ կառավարական կազմակերպություն է, որի կանոնադրական գործառույթները, նպատակներն ու խնդիրներն են՝ ի թիվս այլոց Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացման նպաստելը, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությունը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը, մարդկանց իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն աջակցելը: Յուրաքանչյուր տարի հունիս-սեպտեմբեր ամիսներին ԻԱԿ-ը տեղեկություններ փնտրելու եւ ստանալու (փնտրած տեղեկություններին ծանոթանալու) իր իրավունքն իրականացնում է “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումով իրեն տրված հնարավորությունների շրջանակում, որը պարտավորեցնում է տեղեկություն տնօրինողներին 13 խումբ տեղեկություններ հրապարակել սեփական նախաձեռնությամբ (առանց հարցման առկայության): Որպես արդյունք, ԻԱԿ-ը յուրաքանչյուր տարի մշակում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հրապարակայնության ինդեքս (foi.am/rating) Իմ Վստահորդը իրեն անհրաժեշտ տեղեկությունները փնտրել է Աշտարակի քաղաքապետարանի <http://ashtarak.am/Pages/Home/default.aspx> կայքում, Արմավիրի քաղաքապետարանի <http://mer.armavir.am/Pages/Home/Default.aspx> կայքում, Գավառի քաղաքապետարանի <http://www.gavariqaghapetaran.am/> կայքում, Հրազդանի քաղաքապետարանի <http://www.hrazdan.am/> կայքում, Կապանի քաղաքապետարանի <http://www.kapan.am/Pages/Home/Default.aspx> կայքում, Եղեգնաձորի քաղաքապետարանի www.yeghegnadzor.am կայքում եւ Իջևանի քաղաքապետարանի <http://www.ijevancity.am/Pages/Home/Default.aspx> կայքում: Մակայն, ԻԱԿ-ի կողմից փնտրված եւ օրենքով պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները հասանելի չեն եղել, հրապարակված չեն եղել: Սույն հայցով վիճարկվում է Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Կապանի, Եղեգնաձորի եւ Իջևանի քաղաքապետարանների (այսուհետ նաեւ՝ Քաղաքապետարաններ) կողմից “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները կայքում չհրապարակելու (անգործության)

իրավաչափությունը խնդրվում է պարտավորեցնել Քաղաքապետարաններին հրապարակել պահանջվող տեղեկությունը:

2. Փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը

2.1. 2017թ.-ի հունիս-սեպտեմբեր “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” հասարակական կազմակերպությունն իրականացրել է ուսումնասիրություն՝ ի թիվս այլ մարմինների Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Կապանի, Եղեգնաձորի եւ Իջևանի քաղաքապետարանների կայքերում "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները ստանալու նպատակով:

2.2. Քաղաքապետարանների կայքերում "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բոլոր տեղեկությունները հրապարակված չեն եղել:

3. Հայցի իրավական հիմքերը

3.1. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ “1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: (...) 3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով”:

3.2. ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի համաձայն՝ “1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: 2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով”:

3.3. “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ “Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից”:

3.4. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ “Յուրաքանչյուր անձ իրավունք ունի

ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը”:

3.5. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ տեղեկություն տնօրինող են այդ թվում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները եւ պետական հիմնարկները:

3.6. Նույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ “Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձևերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.

9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները”:

3.7. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ “Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով”:

3.8. Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ “Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ ... տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն...”:

3.9. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ “Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով”:

4. Հայցի փաստարկները

4.1. Սույն վեճի առարկան Քաղաքապետարանների կողմից Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկություններն իր ինտերնետային կայքում չհրապարակելու իրավաչափությունն է: Իմ Վստահորդը գտնում է, որ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները ամբողջությամբ չհրապարակելը խոչընդոտներ է հարուցում այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, քանի որ փնտրվող տեղեկությունները ստանալու համար ստիպում են իմ Վստահորդին լրացուցիչ գործողություններ իրականացնել, ծախսել ժամանակ եւ միջոցներ, ինչպես նաեւ Քաղաքապետարանները չեն ապահովել անհրաժեշտ պայմաններ իմ Վստահորդի տեղեկություն ստանալու իրավունքի իրականացման համար, սեփական նախաձեռնությամբ չեն հրապարակել պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններն իրենց կայքում, ինչի արդյունքում իմ Վստահորդը չի կարողացել իրականացնել իր փնտրած տեղեկություններին ծանոթանալու (անվճար, համացանցի միջոցով) իր իրավունքը, Քաղաքապետարանները դա պետք է ապահովեին “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի (7-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի) ուժով:

4.2. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ “Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետևյալ տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.

9) աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները”:

Օրենքի նշված նորմը իմպերատիվ է, այն չի սահմանում տեղեկությունները հրապարակելու կամ չհրապարակելու հայեցողություն, իսկ Օրենքը չի նախատեսում Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնից բացառություն Քաղաքապետարանների համար: Հետևաբար, Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Քաղաքապետարաններից յուրաքանչյուրը պարտավոր էր տարին առնվազն մեկ անգամ հրապարակել վերոնշյալ 13 խումբ տեղեկությունները:

4.3. “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ “Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով”: Նշված նորմը նույնպես իմպերատիվ էմ չի սահմանում տեղեկությունները իրտերնետային էջի առկայության դեպքում դրանով հրապարակելու կամ չհրապարակելու հայեցողություն: Հետևաբար, Օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով-ը պարտավոր է վերոնշյալ 13 խումբ տեղեկությունները հրապարակել իր ինտերնետային կայքում:

4.4. Քաղաքապետարանները չեն կատարել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով իր վրա դրված պարտականությունը, դրսևորել է անգործություն, ինչը ոչ իրավաչափ է:

Տեղեկատվություն հրապարակելու պարտավորեցնելու պահանջի վերաբերյալ

4.5. Եթե դատարանը հաստատի սույն հայցի 4.1, 4.2, 4.3 և 4.4 կետերում նշված փաստարկները, մասնավորապես՝ ոչ իրավաչափ ճանաչի-ի այն անգործությունը, որով որ Քաղաքապետարանները չեն կատարել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով իր վրա դրված պարտականությունը, ապա գտնում ենք, որ արդարացի իրավունք ունենք դատարանից խնդրելու պարտավորեցնել Քաղաքապետարաններից յուրաքանչյուրին

իր ինտերնետային կայքում հրապարակել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 13 խումբ տեղեկությունները:

5. Հայքը վարույթ ընդունելու հիմնավորումներ

5.1. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ “Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել Քաղաքապետարանների գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ. 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում...”:

5.2. ԻԱԿ-ը ոչ կառավարական կազմակերպություն է, որի կանոնադրական գործառույթները, նպատակներն ու խնդիրներն են՝ ի թիվս այլոց Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացման նպաստելը, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը, մարդկանց իրավաբանական եւ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն աջակցելը: Իր կանոնադրական նպատակները իրականացնելու համար ԻԱԿ-ն ի թիվս այլնի “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորման միջոցով տեղեկություն տնօրինող մարմիններից փնտրում եւ ստանում է տեղեկություններ: Մա կրում է պարբերական բնույթ, ԻԱԿ-ը միեւնույն մարմի կայի միջոցով իրեն անհրաժեշտ տեղեկությունները փնտրում է պարբերաբար, ամեն տարի, ուստի ԻԱԿ-ի համար առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ գործողություն կրկին կատարելու (տարին առնվազն մեկ անգամ Օրենքով սահմանված պարտադիր հրապարակմեն ենթակա տեղեկությունները հրապարակված չլինելու) վտանգ: Հետեւաբար սույն հայցի պահանջը բխում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից: Միաժամանակ, “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ “Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝ (...) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.”:

5.3. Բացի այդ, ԻԱԿ-ի՝ վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակն ուղղված է վարչական մարմնի ոչ իրավաչափ անգործության ճանաչմանը եւ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման վերականգնմանը: Իր իրավունքի դատական պաշտպանությունն իրականացնելու նպատակով ԻԱԿ-ը կատարել է ծախսեր, որոնք չէր կատարի, եթե իր իրավունքը խախտված չլիներ: Ուստի, եթե պարզվի, որ իմ Վստահորդի իրավունքը խախտվել է, ապա ԻԱԿ-ը մտադիր է պահանջել վնասի հատուցում: Հետեւաբար սույն

հայցի պահանջը բխում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից:

5.4. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն՝ “Հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ (...) 5 տարվա ընթացքում՝ (...) սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով”: Ուստի, սույն հայցը ներկայացվում է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում:

5.5. Հայցի սույն կետում եւ համապատասխան ենթակետերում հիմնավորում ենք տեղեկություն տրամադրելու պարտավորեցնելու մասին պահանջի առկայությունը եւ փաստարկներ այն մասին, որ Քաղաքապետարանների անգործությունը ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով իրեն սպառել է: Ներքոնշյալ փաստարկների հիման վրա գտնում ենք, որ սույն հայցը պետք է վարույթ ընդունվի առկա հայցապահանջներով:

5.5.1. Գտնում ենք, որ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ նույն մասով սահմանված տեղեկությունները հրապարակելու (գործողությունը կատարելու) ժամկետը սահմանված է **“տարին մեկ անգամ”**, հետեւաբար տվյալ տարում տեղեկությունները չհրապարակելու դեպքում այլեւս սպառվում են Օրենքի տվյալ իրավակարգավորման շրջանակներում տեղեկություն տնօրինող վարչական մարմնի կողմից կատարման ենթակա բոլոր գործողությունները: Հետեւաբար, սպառված են նաեւ օրենքի շրջանակներում գործելու կամ օրենքի խախտումով գործելու՝ վարչական մարմնի հետագա հնարավորությունները (եթե վարչական մարմինը տվյալ տարում մեկ անգամ չի հրապարակել տեղեկությունները, ապա այլեւս հնարավորություն չունի չխախտել Օրենքը):

5.6. Եթե ՀՀ վարչական դատարանը հայցի վարույթ ընդունելու փուլում գտնի, որ սույն գործով հայցվորի իրավունքներն ավելի արդյունավետ պաշտպանելու եւ վերականգնելու նպատակով ներկայացրած հայցատեսակները սխալ են ընտրված, ապա դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է վարույթ ընդունել հայցը եւ դատական նիստի ընթացքում պարզել հայցի առարկան եւ հիմքը: Այսպիսի իրավական դիրքորոշում է արտահայտել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը ՎԴ/2450/05/2011թ գործով 15.07.2011թ. “Բողոքը բավարարելու մասին” որոշման մեջ: ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը որոշման մեջ հղում է կատարել ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածներին, ՀՀ “Վարչական դատավարության” օրենսգրքի 6-րդ հոդվածին (նախկին խմբագրմամբ՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”)), 8, 86-րդ հոդվածներին (նախկին խմբագրմամբ) եւ հանգել է եզրակացության, որ “եթե վեճը ծագել է հանրային իրավահարաբերություններից եւ այն վերապահված չէ նույն հոդվածի 2-րդ կետում նշված մարմինների քննությանը, ապա այդ գործը ենթակա է քննության ՀՀ Վարչական դատարանում”: ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ հոդվածներով սահմանված իրավունքով մատնանշում են ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանի վերոնշյալ դատական ակտում դատարանի կողմից

օրենքներին տրված մեկնաբանությունները. դրանք կիրառելի են սույն հայցի շրջանակներում հայցադիմումի ընդունման հարցը լուծելիս:

5.7. Սույն հայցով ներկայացված չէ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (անդորրագիր) հետեւյալ պատճառաբանությամբ. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն «Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»: Խնդրում եմ հաշվի առնել, որ Վստահորդս ոչ առևտրային՝ շահույթ չհետապնդող կազմակերպություն է, նրա նպատակներն ու խնդիրներն են, ի թիվս այլոց՝ Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանը նպաստելը, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը: Իր խնդիրներն իրականացնելու նպատակով դատական պաշտպանության իրավունքն իրացնելու համար Վստահորդիս կողմից պետական տուրքի վճարումը կստվերի այն իրավունքի կարեւորությունն ու արժեքը, որի պաշտպանությունն իրականացնում է նա: Խնդրում եմ հաշվի առնել, որ սույն գործով հայցվորը ոչ առևտրային՝ հասարակական կազմակերպություն է եւ այս պահին նյութական սահմանափակ հնարավորություններ ունի, եւ պետական տուրքի վճարումը կոժվարեցնի նրա կողմից իր իրավունքի պաշտպանության իրականացումը, սակայն ցանկանում է օգտվել իր խախտված սահմանադրական իրավունքի դատական պաշտպանության իրավունքից: Ուստի՝ առաջնորդվելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածների դրույթներով միջնորդում եմ հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի համար սահմանել պետական տուրքի արտոնություն. ազատել պետական տուրքի վճարումից կամ հետաձգել պետական տուրքի վճարման ժամկետը՝ մինչև սույն գործով դատական ակտի կայացումը:

5.8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ “Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տալիս է նրա գործադիր մարմնի ղեկավարը կամ կանոնադրությամբ այդ իրավաբանական անձին առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձը՝ նրա ստորագրությամբ, իսկ կնիքի առկայության դեպքում՝ նաև իրավաբանական անձի կնիքի դրոշմամբ”: Սույն հայցադիմումը ստորագրել է ԻԱԿ-ի նախագահը, սակայն կից ներկայացվում է ներկայացուցիչ Գեորգ Հայրապետյանին տրված՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Լիանա Դոյոյանի ստորագրությամբ եւ ԻԱԿ-ի կնիքով հաստատված լիազորագիր:

6. Հայցի պահանջը

Ելնելով վերագրյալից եւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով եւ 11-րդ գլխի պահանջներով՝

Խնդրում եմ

6.1. ոչ իրավաչափ ճանաչել Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Կապանի, Եղեգնաձորի եւ Իջեւանի քաղաքապետարանների այն անգործությունը, որով որ Քաղաքապետարանները չեն կատարել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով իր վրա դրված պարտականությունը:

6.2. պարտավորեցնել Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Կապանի, Եղեգնաձորի եւ Իջեւանի քաղաքապետարաններին իրենց ինտերնետային կայքում հրապարակել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 13 խումբ տեղեկությունները:

7. Տեղեկություններ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ

7.1. Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից Քաղաքապետարանների անգործությունը վերադասության կարգով չի բողոքարկվել, քանի որ “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքը նման պարտադիր պայման չի նախատեսում:

8. Հայցին կցվող փաստաթղթերը

8.1. Սույն հայցը եւ կից փաստաթղթերի պատճենները Աշտարակի, Արմավիրի, Գավառի, Հրազդանի, Կապանի, Եղեգնաձորի եւ Իջեւանի քաղաքապետարաններին ուղարկելը հավաստող փաստաթուղթը (փոստային անդորրագիր),

8.2. Սույն հայցը եւ կից փաստաթղթերի պատճենները ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղարկելը հավաստող փաստաթուղթը (փոստային անդորրագիր),

8.3. “Ինֆորմացիայի ազատության կենտրոն” ՀԿ-ի կողմից իր ներկայացուցչին տրված լիազորագրը:

ԻԱԿ նախագահ՝

Լիանա Դոյրոյան

23.09.2017թ.